ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » հուլիսի 2014 թվականի № 18

«ԽԱՉՓԱՐԻ ԲՈՒԺԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ԽԱՉՓԱՐԻ ԲՈՒԺԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ ավագանին որոշում է.

«Խաչփարի բուժամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վերակազմավորման ձևով վերակազմակերպել որպես «Խաչփարի բուժամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ):

1. Ընկերության նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն ընդունել Խաչփարի համայնքային հաշվեկշիռ՝ համաձայն հավելված 1-ի (այսուհետ՝ հավելված 1):
2. Ընկերության նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքը, համաձայն հավելված 1-ի, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Խարփար համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

3. Ընկերության տնօրինության տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել ՀՈԱԿ-ին՝ որպես իրավահաջորդի:

4. Հաստատել՝
   1) ՀՈԱԿ-ի գույքի կազմը՝ համաձայն հավելված 2-ի:
   2) ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի:

5. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել ՀՈԱԿ-ի պետական գրանցումը՝ Ընկերության միջոցների հաշվին:

6. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Խաչփար համայնքի ղեկավարին:

Կողմ(7) Դեմ(0) Չեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ